

## **Տեղեկատվություն**

«Դիլիջան» ԱՊ » ՊՈԱԿ-ի 2015թ-ի օգոստոս ամսին կատարած աշխատանքները

2015 թ-ի Աշխատանքային պլան-ծրագրով նախատեսված աշխատանքներից «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի բաժիններում օգոստոս ամսում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Պահպանության բաժնի աշխատակիցների կողմից ԱՊ-ի տարածքում հայտնաբերվել է ապօրինի հատված 25 ծառ, որոնց համար կազմվել է 7 հատ անտառոխախտման արձանագրություն և ուղարկվել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին՝ ընթացք տալու , իրականացվել է հակահրդեհային նշանակության ճանապարհների կառուցում՝ 1,5 կմ:

2. Գիտական բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել են՝ հերբարիումների պատրաստման համար նախապատրաստական աշխատանքներ, <<Դիլիջան>> ազգային պարկի էկոհամակարգերի վրա ազդող գործոնների ուսումնասիրում:

Վայրի պտուղների և հիմնական ծառատեսակների (հաճարենի, կաղնի, բոխի) ֆենոլոգիայի ուսումնասիրում: Քարտադարանի լրացում: Ազգային պարկի տարածքում տարբեր բուսատեսակների ուսումնասիրում: Կենդանական աշխարհի՝ թռչունների բնադրավայրերի, այծյամի պոպուլացիայի ուսումնասիրման նպատակով կազմակերպվել են դիտայցեր :

Տեղեկատվություն հավաքելու նպատակով պարբերական հանդիպումներ են կատարվել տեղամասային տեսուչների հետ: Այցերի և հանդիպումների արդյունքում նկատվել են այժամներ, կատարվել է ֆոտո նկարահանում:

3. Էկոտուրիզմի և ռեկրեացիայի բաժնի կողմից շարունակվում է իրականացվել էկոտուրիստական ծառայությունների մատուցման աշխատանքները:

4. Կազմակերպությունում անց են կացվել մրցույթներ՝ կազմակերպության կարիքների համար ավտոմեքենաների և կազմակերպության տրանսպորտային միջոցների տեղնիկական սպասարկման ծախսերի ձեռքբերման համար: